

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասուրյուն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատմենել և տարածել նյուրը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյուրը առեղելու համար նորը

You are free to:

Share – copy and redistribute the material in any medium or format

Adapt – remix, transform, and build upon the material

ՀԱԽՑ ՀՈՂՔՈՂԿՈՄԵՏ

№ 70 ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ № 70

Հ. ՓԻՐՈՒՄՅԱՆ

ԽՈՏԱԲՈՒՅՍԵՐԸ


ՅԵՎ

ՆՐԱՆՑ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ
ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ




ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 1980



ՀԱՅՀ ՀՅՈՒՋՈՎԿՈՄԱՅ
№ 70 ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱՎԱՐԱՆ № 70

Z. ՓԻՐՈՒՅՑԻՆ



ԽՈՏԱԲՈՒՅՍԵՐԸ

ՅԵՎ

ՆՐԱՆՑ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ
ՅԵՎԱՆԱԿՆԵՐԸ

A 8368



ԳԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 1930

Հրատ. № 1197

ԹԵՏՐԱԿԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Գրառեալվ. № 3068 (բ.) Պատվ. № 229 Տիրաժ 5000

ԽՈՏԱԲՈՒՅՍԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՄՅԱԿՈՒԹՅԱՆ
ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Տարի չի լինում, վոր մեր դաշտերի բերքի
պակասելու մասին գանգաներ չլսվեն։ Դաշ-
տերի ըերքը պակասելու հետ վատանում են
նաև արոտները և խոտհարքները։ Այս բոլորի
հետհանքը լինում է այն վոր քաղցած և մնում
ինքը զյուղացին և նրա հետ ել իր անասուն-
ները։

Հողի պակաս բերք տալու պատճառն ել
հասկանալի լի, վարովհետեւ բույսերն իրենց
սնունդն ուստանում են հողի մեջ լիդած մննդա-
րար նյութերից, վորոնց քանակը տարբեր
տեսակի՝ հողերի մեջ տարբեր և լինում։
Այս քանը մեր զյուղացիք լավ գիտեն, և շատ
անգամ կըսեց նրանցից, թե՛ այլո հողը հարուստ
է, ուժեղ, իսկ մյուսն աղքատ և և խուզք։ Գյու-
ղացիք գիտեն նաև, վոր սի, փափուկ և փըխ-
րուն հողերը լավ են, քան մախրագոյն, չոր և
կոշառվոր հողերը։ Այս բոլորը հասկանալով ե,
վոր հողագործներն իրենց քանջարանոցները և
ըստանները պարարտացնում են դոմաղբով։

Նույն բանը լավ կլինի, և նույնիսկ անհրաժեշտ
ե անել հացահատիկներ ցանվող դաշտերի հա-
մար, յեթե միայն մեր գյուղացիք գոմաղը
գործ չածեն իրքեւ վառելիք փայտի պակասու-
թյան կամ բոլորովին չլինելու պատճառով:

Բուլսերը սնվում են հողի մեջ յեղած
աննդարուր նյութերով. այս բանը հողագործը
փորձով գիտե և աշխատում է հողին վերա-
դարձնել նրա մեջ պակասած նյութերի դոնե
մի մասը:

Մեկ, յերկու կամ յերեք տարով հողը հաճա-
գիստ թողնելն այն նշանակությունն ունի, վոր
նրան հնարյավորություն և արվում ժամանակի
ընթացքում իր մեջ հավաքելու բուլսերի հա-
մար հարկավոր և անհրաժեշտ աննդարար նյու-
թերը:

Հողը հանգստացնելու և ուժեղացնելու այս
միջոցը գյուղացին գտել է հաղարավոր տարի-
ների փորձով:

Ամեն մի հողագործ գիտե, վոր խամ հողե-
րում հացարույսերը լավ են աճում և թողնում
ե, վոր հողը «հանգստանա», այսինքն արհես-
տական կերպով աշխատում ե ստեղծել «խամ»
հող: Բայց այս արհեստականը նման չե ընտ-
կան խամ հողին: Այս բանն ավելի պարզ նկա-
տելի յե ընտկան և արհեստական խամ հողե-

բում բուսած խոտերը համեմատելիս Բնական
խամ հողում բուսնում են մեծ քանակությամբ
քաղցր և սննդարար խոտեր, իսկ արհեստական
խամ հողում բուսնում են կոշտ, անասունների
կերի համար անպիտք մոլախոտեր (ալաղ): Ալդ
մոյախոտերն ել թե՛ հողաղործը քաղում տա-
լիս և անասուններին, բայց դա յել անում ե
կարիքից սախոված:

Յեթև հանդսատի թողած հողի բուսականու-
թյունը նուան չե բնական խամ հողի բուսակա-
նությանը, ուրեմն նշանակում ե, վոր հողը մեկ,
չերկու և նույնիսկ յելեք տարում չի կարաղա-
նում հավաքել իր կորցրած ուժերը: Վորպեսզի
հողը կարճ ժամանակում հավաքի իր ուժերը և
դառնա պաղափետ, պետք և դիմել խոտացա-
նության, այսինքն՝ արհեստական կերպով բաղ-
մացնել լավ ու քաղցր խոտերը, վորոնք բուս-
նում են յերկար ժամանակ՝ չհերկված խոժ
հողերում:

Արանից 145 տարի տռաջ մի գերմանացի
հողաղործ, Շուբարու անունով, նկատում ե, վոր
յերեքնուկ բուսած հողերում հացի բերքն տռատ
ե լինում:

Ոգտվելով՝ զրանից, նա հավաքում է յերեք-
նուկի սերմերը և ցանում իր հողերում: Յեր-
կու տաշի շաբանակ նա յերեքնուկի լավ բերք

Ե ստանում և ավելի շատ, քան վորեկ խոս-
հարքից։ Հետո յերեքնուուկի տեղը վարում ե և
հացահատիկ ցանում ու ստանում ե իր շրջա-
նում չտեսնված բերք։ Տեսնելով յերեքնուուկի
տված ոգուուը՝ գերսանացի ալդ հողաղործն իր
բոլոր հողերում հերթով ցանում ե յերեքնուուկ։
Սրա որինակին հետեւուժ են նրա հարեանները։
Այսպիսով այդ ըջանի հողերի բերքը հետզհետեւ
բարձրանում ե։

Փորձով պարզված ե, վոր բերքն առատ ե
լինում ուրիշ խոտաբույսեր մշակելուց հետո
յել մանավանդ առվույտից (յօնջալից), կորնզա-
նից և առհասարակ նման բաղմանցա բույսերից
հետո։ Ալդ բույսերն ունեն ուժեղ և հողի մեջ
խորը գնացող արմատներ, վորոնց ոգնությամբ
ծծում են հողի խոր շերտերից սննդարար հյու-
թեր։ Իսկ հացաբույսերի արմատները խորը չեն
գնում, ուրեմն և չեն կարող ոգտվել հողի ներ-
քին շերտերում գտնված սննդարար հյութերից։
Ասացինք, վոր խոտաբույսերը խորը շերտերից
ծծում են հողի մննդարար հյութերը. այդ հյու-
թերի մեծ մասը բույսերը զործ են ածում հո-
ղից գուրս գտնված իրենց մասերի մննդի հա-
մար, իսկ մի մասն ել մում ե հողի վերին
շերտերում, վորը հետո գտնում ե մունդ խո-
տաբույսերից հետո մշակվող բույսերի համար։

Բացի դրանից, պարզված ե, վոր լեռեք-
նուկի, առվուլտի, կորնդանի և առհասարակ
այն բոլոր բույսերի արմատների վրա, վորոնց
սերմերը նման են լոբու սերմերին (սըանք



Նկ. 1. Ցերեֆնուկի արմատներն իշենց պառկեներով.

կոչվում են լորիածաղիկ բույսեր), գտնվում են
մեծ քանակությունը պալարներ (խոցեր) (տես
Նկ. 1): Այդ պալարների մեջ հավաքվում ե-

բուլսի սննդի համար շատ անհրաժեշտ նյութերից մեկը, վորը կոչվում է ազոս։ Հողերը գումարով պարարտացնելիս (գոմաղբն ել պարունակում է ազոս), մենք հողը դիխավորապես հարստացնում ենք նույն աղոտով։

Հողագործների կատարած բազմաթիվ վորձերը ցույց են տալիս, վոր խոտաբույսերից նետո հացի բերքն ամեն մի հեկտարից ստացվում է յիրեք—հինգ ցենտներ ավելի։

Խոտաբույսերի ողուտն այն չե մըայն, վոր բարձրացնում են հողի պտղաբերությունը, այդ բույսերի նշանակությունը մեծ է նաև անառնապահության, մանավանդ կաթնատու և լծկան տավարի խնամքի համար։

Մի հեկտարից բնական լավ խոտհարքից հազիվ է ստացվում 10—15 ցենտներ խոտ, իսկ ցանովի խոտհարքից կարելի լե ստանալ վոչ պակաս 30, նույնիսկ 80 ցենտներ և այն ել ավելի լավ հատկության խոտ։ Որինակ՝ մւանականի չե առվույտի (յոնջալի) բարձր արժեքը։

Մոսկվայի նահանգի այն ոյուղերում, վորտեղ խոտացանությամբ չեյին պարապում, կովերի կենդանի քաշը 16 վութ 20 ֆունտից, իսկ մի տարում ստացած կաթը 98 և կես դուրսից (վեդրուից) ավելի չեր լինում։ բայց այն գյուղերում, վորտեղ պարապում եյին խոտա-

ցանությամբ, կովերի կենդանի քաշը 19 կ. 30 ֆունտից և մի տարում ստացված կաթը 123 դուլից (վեզրովից) պահանջեր լինում:


Նման որինակներ կարելի յե շատ բերել: Կոսկած չկա, վոր խոտացանությունը բարձրացնում և բերքի քանակը, շատացնում, լավացնում և անառանների կերը, բարձրացնում և անառաններից ստացված արդյունքը և նույնիսկ նպաստում նրանց բազմանալուն: Հասկանալի յե, վոր շատ կեր ունենալու դեպքում կարելի յե ողոնել և շատ անառաններ: Անառանների բազմանալու հետ ավելանում և նաև զոմաղը, իսկ դա մեզ անհրաժեշտ և հողերը պարարտացնելու և նրանց պտղաբերությունը բարձրացնելու համար:

Ով մի անգամ արդեն խոտ և ցանել, այլևս նրանից չի հրաժարվի, վորովհետև խոտ ցանողի թե հողի բերքն և առառանում, և թե անառաններն են բազմանում:

Պարզելով խոտացանության անհրաժեշտությունն ու տված ոգուանները, այժմ ծանոթանանք խոտաբույերի զլիսավոր տեսակների հետ:

ՅԵՐԵԲՆՈՒԹԻԿ. — Սրա կարմիր և սպիտակ ծաղկավոր անսակները շատ տարածված են լեռնային շրջանների արոտատեղերում, խոտնաբօ-

Ներում, արտերի յեզրերում և անտառների բա-
ցումներում:




Նկ. 2. Երեսնուկ նիշակագույն, կասլաւավուն-
առաջին տարին. դեղին: Գնելիս պիտի աշխա-
տել, վոր սերմերը զանազան գույնի լինեն: Սեր-

ՑԱՆԵԼՈՒ ՑԵՐԵՔՆՈՒԿՆ ունի
կարմիր ծաղիկներ և սպիտակ
յերեքնուկից զանազան վելու
համար կոչվում է ցանելու
կարմիր յերեսնուկ: Սպիտակ
յերեքնուկը ցանում են վոչ
թե դաշտերում, այլ խոտ-
հարքներում, յերբ ուղում են
այդ խոտհարքներն ազնվաց-
նել: Ցեթե ցանելու կարսիր
յերեքնուկը համեմատենք իր
վարենի տեսակների հետ,
կտեսնենք, վոր ցանելու կար-
միր յերեքնուկի ցողունները
բարձր են, հյութալի, խոկ տե-
րեները՝ փափուկ և մոռալի
(տես նկ. 2 և 3):

ՑԵՐԵՔՆՈՒԿԻ ՍԵՐՄԵՐԸ շատ
նման են լոբուն: ՍԵՐՄԻ գուլ-
ները միատեսակ չեն: Նրանք
լինում են դեղին, մուգ-մա-

մերի միատեսակ դույնը վատ հատկության
նշան եւ



Նկ. 3. Յերենուկը յերկուրդ յեզ յերօրդ տարին.

Մեկ հեկտար հողում ցանում են սիջին
հաշվով 21—22 կիլոգրամմ սերմ, իսկ յեթե
հողը լավ և մշակված, և նշաններ կան, վոր մեծ
քանակությամբ մոլոխոտեր չեն աճիլ, կարելի

յե ցանել նաև 14 կամ 15 կիլոդրամմ սերմ:

Յերեքնուկն ավելի շուտ ցուրտ յերկրի բուլս ե. նա սիրում ե սև-փխրուն և խոնավ հող: Մեր լեռնային շրջանների հողերը յերեք-նուկի համար լավ են, և դրա համար ել լեռնային բոլոր խոտհարքների խոտերի մեջ զանազան տեսակի յերեքնուկներ շատ են լինում, մանա-գանդ Լոռու, Կարմիր-Գյուղի շրջաններում:

ԿԱՐՄԻՐ ՅԵՐԵՔՆՈՒԿԸ բաղմամլա բուլս եւ Առհասարակ նրանից ողտվում են յերկու տա-
րի, իսկ հետո հողը հերկում և տեղը հացահա-
տիկներ կառ կտավատ են ցանում: Առաջին
տարին ցանված յերեքնուկը խոտ չի տալիս, այլ
տալիս ե մի փունջ տերններ, վորոնք փոփում
են հողի յերեսին: Այդ շրջանում նրա արմատն
ուժեղ կերպով զարգանում և հաստանում ե վե-
րին ծայրում: Այս մասը կոչվում ե արմատա-
վզիկ: Առհասարակ յերկրորդ տարվա գարնանը
զարգանում են ցողունները ծաղիկներով, այն-
պես վոր յերեքնուկը քաղել կարելի յե յերկ-
րորդ և յերրորդ տարում. միտք չկա յերկու
տարուց ավելի պահել յերեքնուկը, վորովհետե-
ռորիշ խոտերն աստիճանաբար զարգանալով
նրան խեղղում են, այդ պահճառով ավելի լավ
ե հերկել յերկու տարի ովտվելուց հետո, ինչ-
պես ամեն աեղ ընդունված եւ:

Ասացինք, վոր յերեքնուկն առաջին տարին խոտ չի տալիս, բայց վորպեսզի հողից կարելի լինի ոգուտ ստանալ, յերեքնուկը ցանում են աշնանացանի կամ դարնանացանի հետ, ինկատի ունենալով, վոր այնուհետև հողամասը յերկու տարի շարունակ բռնված կլինի յերեքնուկով։

Յերեքնուկի սերմերը ցրտերից, ստունամանիքներից չեն վախենում, իսկ ծլելու և աճելու համար պահանջաւմ են մեծ քանակությամբ ջուր, այդ պատճառով նրան պետք է ցանել այն ժամանակ, յերբ ձյունը նոր և սկսում հալվել, և հողն ել դեռ փափկած չի լինում. այդ ժամանակ ավելի հեշտ եւ դաշտերում ման գալ և սերմերը շաղ տալ, հալվող ձյունի ջրերը սերմերը քաշում են հողի մեջ։ Այդպես պետք է անել, յերբ ցանվում և աշնանացանի վրայով։

Յեթե ցանկանում են յերեքնուկը գարնանացանի հետ ցանել, տուաջ ցանում են հացահատիկը և փոցիսում, հետո ցանում են յերեքնուկը և նորից փոցիսում, վորպեսզի յերեքնուկի սերմերը հողավ ծածկվեն։

Յերեքնուկի սերմերը շատ մանը են. վորովերզի կորելի լինի հավասար ցանել, սերմերը խտոնում են ավագի կամ (մանը) հողի հետ ու անպես ցանում։

Հացարույսերի մեջ յերեքնուկի մատղալ

ծիլերն ամառը սկսած պահնվում են տընի այրող ճառագայթներից:

Եինում են տարիներ, յերբ հացաբույերը քաղելուց հետո աշունը լինում է տաք և յերկարատես. այդ դեպքում յերեքնուկն առաջին տարին ուժիղ կերպով զարդանում է. այսպիսի դեպքերում յերեքնուկը պետք է քաղել, բայց վոչ տակից, այլ 3—4 սանտիմետր հողից բարձր:

Մատղաշ յերեքնուկի մեջ անասուններ արածեցնել չի կարելի, վորովինեակ նրանք կարող են յերեքնուկը կրծել մինչև արմատավզիկը և վոչնչացնել նրա վրա գտնված պտուկները, վորոնցից ամեն տարի առաջանում են նոր ցողուններ: Յերկրորդ և յերրորդ տարին ազդ արմատավզիկները կարճանում են և ծածկվում հողով, իսկ առաջին տարին նրանք գտնվում են հողից դուրս:

Յերեքնուկի մեջ յերեք վոչխարներ և այծեր չպետք ե արածեցնել, վորովինեակ նրանք խոտը շատ տակից են կրծում և կմնասեն արմատավզիկը նրա վրա յեղած պտուկներուի:

Յերեքնուկի մեջ անասուններ արածեցնելիս պետք ե ինկատի ունենալ, վոր կանաչ և թարմ յերեքնուկն անասունների վորը փքացնում եւ դրա համար ել վաղ առավոտյան, յերբ

խոտը ծածկված եւ ցողով կամ թաց ե, անառաններ չպետք եւ թողնել լերեքնուկի մեջ։ Մինչև յերեքնուկով կերակրելը նրանց պետք ե ջրել ե, յեթե հնարավոր ե, առաջ բէջ կերակրել չոր խոտավ։ Խտի համար յերեքնուկը պետք ե քաղել այն ժամանակ, լերը ամբողջ դաշտը ծածկված ել լինում ծաղիկներով։ Այդ շրջանում ստացվում ել լավ ըերբ։

Ամառվա ընթացքում լերեքնուկը քաղում են մեկ կտմ յերկու անգամ, իսկ աշնանն ստացվում ե յերեքնուկի արածեցնելու լավ կանաչ։ Մեկ հեկտարից կարելի յե ստանայ մոտ 60 ցենոններ խոտ, բայց 25 ցհնան։ վոչ պակաս։

Յերեքնուկի արմատները հողում շատ խորն են զնում և վարպեսզի նրանք կարողանան ող ստանայ, հողը պետք ել լինի փխրուն, իսկ վորովհեսզի հողը փխրուն լինի, նըա վրա անասուններ չպետք ել թողնել լերկար և չարածեցնել խոնավ ժամանակ։ Բացի դրանից հարկավոր ե առեն անգամ դարնանը և աշնանը յերեքնուկի դաշտը փոցիսել, վորովհեսզի հողի վերին շերտը փափկի։ Աշնանը կարելի յե հողը փոցիսել, լերը անասուններն ալես լերեքնուկի մեջ չեն արտծիլ։

Յերեքնուկը մի մեծ թշնամի ունի. դա գալախոսն ե (գելուկ)։ Յեթե նա յերեքնուկի

մեջ բուսնի, անսպայման կվոչնչացնի նրան։ Այս
բույսը փաթաթվում է յերեքնուկելին և ապրում
նրա հյութերով (տես նկ. 4):



Նկ. 4. Գայլախոսը յերեքնուկի վրա.

Հենց վոր յերեքնուկի վրա գայլախոս յե-
րեա, այդտեղը պետք է նավթ ածել ու ալրել
և կամ պղնձի կամ յեկաթի արջասպով սրսկել
(100 մաս ջըին պետք է վերցնել հինգ մաս ար-

Հասող): Իսկ յեթե նկատվի, վոր գայլախոտը բազմացի և արդեն, պետք է հողը հերկել և յերկու-յերեք տարի յերեքնուկ չցանել:

ՅԵՐԵՔՆՈՒԿԸ թեև բազմամյա բույս է, բայց նու լրիվ բերք տալիս է յերկու տարի: Հաշված ցանելու տարին, իսկ յեթե ցանկանում են հողից ավելի յերկար ժամանակ խոտ ստանալ, այն դեպքում յերեքնուկի հետ ցանում են նաև սիզ խոտ, վորի մասին կխոսենք հետո: Խառնուրդի համար վերցնում են 8—12 կ. յերեքնուկի սերմ և 6—8 կ. սիզ խոտի սերմ: Միզ խոտն սկսում և դարդանալ միայն յերբորդ տարում: Նշանակում է, առաջին յերկու տարում ուժեղ զարդանում է յերեքնուկը, իսկ հետո հետզհետե սկսում է զարդանալ սիզ խոտը:

Ա.Բ.Վ.Ռ.Ի.Ց.Տ (յոնջա) (տես նկար 5): ՅԵՐԵՔՆՈՒԿԸ լավ բուսնում է խոնավ և ցուրտ շըրշաններում, իսկ առվույտն, ընդհակառակն, չոր և տաք շըրշանների բույս է: Արարտյան դաշտում առվույտ ցանում են վաղուց: Բայց առվուրտը կարելի յե ցանել նաև ավելի պակաս տաքություն ունեցող ուրիշ շըրշաններում: Այդ դեպքում պետք է ընտրել ցըտերից և սառը քամիներից, պաշտպանիք տեղեր: Այդ տեղերում ոգտանար և առվույտ ցանել և այն պատ-



Նկ. 5. Թուվուցի ցողունը ծաղիկներով.

ճառով, վոր նրա ծաղիկները մեղրատու լեն:
Առհասարակ մեղվապահական շրջաններում վոր-

պես մեղքատու բույսեր՝ պետք եւ մշակել առվույտ, յերեքնուկ և կորնդան։

Առվույտի սերմերը նույնպես մանր են, բայց յերեքնուկի սերմերից խոշոր են և դարձյալ լորու նման։ Լավ սերմերը լինում են մուգ-դեղին և փայլուն։ Մեկ հեկտար հողում ցանում են մոտ 30 կիլո։

Առվույտի արմատները հողի մեջ շատ հորն են գնում և քանի խորն են գնում արմատները, այնքան բույսը լավ է աճում ու զարգանում և քիչ մնասվում յերաշտից։ Այս հանդամանքը խոշոր նշանակություն ունի տաք շրջանների համար, վորտեղ ջուրն առհասարակ չի բավականացնում։ Առվույտն առհասարակ յերաշտին լավ է գիմանում։

Առվույտը շատ եւ վախենում մոլախոտերից (ալաղից), վորոնք առաջին տարին նրան հեշտությամբ կարող են խեղղել։ Այդ պատճառով առվույտին հատկացրած հողերը պետք եւ խորը հերկել և լավ մշակել։ Յեթե ցանքու կատարվելու յեզարնանը, լավ կլինի, վոր հողը հերկվի աշնանը, իսկ յեթե ցանքուն արվելու յե աշնանը, այն ժամանակ հերկը պետք եւ անել դարնանը կամ ամառվա սկզբներին։ Իսկ յեթե ամառվա ընթացքում հողը ծածկվում եւ խռարով, այն դեպքում փոցխելով պետք եւ վոչնչաց-

նել նրանց։ Քանի ապահոված յեղավ դաշտը մոլուխոտերից, այնքան հաջող կզարդանա առվույտը։

Պարզ ե, ուրեմն, վոր առվույտ կարելի յեցանել թե աշնանը և թե գարնանը։

Առվույտի ցանքսն աշնանն անելու դեպքում ցանքսը պետք ե անել շուտ, այսինքն՝ սինչև ցրտերի ընկնելը, վորպեսզի բույսը ժամանակ ունենա խորացնել իր արմատները և ամրանալ, վորից հետո նրա ծիլերը սառնամանիքներից ազկա չեն վնասվի։ Վաղ աշնանը կատարած ցանքսը նրանով և լավ, վոր հենց առաջին ամառը կարելի յե քաղել։

Հայտստանում ընդունված ե առվույտի ցանքմն անել գարնանը, բայց վորովիետե առվույտի մատղաշ ծիլերը վնասվում են ցրտերից, իսկ մեզ մոտ գարնանը ցրտեր հաճախ են լինում, այդ պատճառով չի կարելի առվույտը մենակ ցանել վաղ գարնանը։ Առհասարակ առվույտը գարնանը ցանում են վորեն հացաբույսի հետ, վորի ծիլերը նրան պաշտպանում են թե ցրտերից և թե արենի ալրող ճառագալթներից։ Իբրև պաշտպանող բույս վերցնում են ցորենը կամ գարին, բայց գարին ավելի լավ ե, վորովիետե սա ավելի շուտ ե հասնում և շուտ քաղվելով հնարավորություն ե տալիս առվույտին արագ զարգանալու։

Առվուլախի աշնան ցանքոը կարիք չունի
պաշտպանող բույսի:

Ցանքոը կատարվում ե ալսպես. առաջ ցա-
նում են հացահատիկը և փոցխում, հետո վրա-
լից շաղ տալիս առվույտի սերմերը և ցախի-
թեթև տափանով ծածկում:

Առվույտի խնամքն առհասարակ սկսվում է
հացարույսը քաղելուց հետո: Յեթե հողը ծած-
կը պաժ ե մոլախոտերով (ալաղով), պետք ե ան-
պայման մաքրել արդ մոլախոտերը: Ինչ վոր
յերեքնուկի մշակության մասին ասացինք, նույ-
նը պետք ե կրկնենք նաև առվույտի մասին:
Մատղաշ առվույտը չի կարելի արածեցնել, վո-
րովինետե անասունները կարող են կրծել նրա
արմատավզիկը, վորի վրա նստած պտուկներից
դուրս են գալու տերեներով և ծաղիկներով նոր
ցողուններ:

Յեթե հացարույսը հնձելուց հետո հողը
շատ չոր լինի, պետք ե առվույսը ջրել: Իսկ
ջրելուց հետո յեթե չորանալիս կեղև բռնի,
պետք ե փոցխել յերկաթե փոցխերով: Այդ ա-
նում են նրա համար, վորպեսզի փխրուն հողի
միջով ողը հեշտությամբ էտրողանա արմատնե-
րին հասնել:

Առվույտը սիրում ե տաք, չոր և կրակին
հողեր: Նա վատ ե աճում խոնավ և թաց հողե-


բում, Վորքան հողը ծանր և կավալին լինի, առան ավելի խորը պետք ե հերկել։ Ցեթե հողը կրային չե, առվույտի հաջող զարգացման համար լավ կլինի պարարտացնել կրով։ Բայց այս ձեկի պարարտացման կարիքը քիչ կլինի, վորովհետեւ մեր հողերն առհասարակ կրով հարուստ են։

Լավ կլիներ առվույտին հատկացրած հողերը պարարտացնել մոխրով։ Մոխիրը բավականաշատ բարձրացնում ե առվույտի բերքը։ Հողում մոխիրը շաղ են տալիս առհասարակ յերկրորդ տարվա գարնանը կամ առաջին տարվա աշնանը։ Մեկ հեկտար հողում պետք ե շաղ տալ 7—10 ցենտներ մոխիր։

Առվույտը բազմամյա բույս ե։ Առհասարակ առվույտ մշակում են հատուկ տեղերում և խոտ ստանալու համար պահում են 5—6—9 տարի։ Բայց առվույտ ցանում են վոչ միայն խոտ ստանալու նպատակով, այլ և ուժից ընկած հողերը լավացնելու համար։ Այս գեպքում ձեռնտու յե առվույտ ցանած հողը հերկել 5-րդ տարում։ Առվույտից հետո հողը յերկար տարիներ կարող ե լավ բերք տալ։ Որինակ՝ նրանից հետո բամբակը շատ հաջող բերք ե տալիս։

Աճեն տարի գարնանը առվույտանոցը պետք ե փոցխել և վորքան հին ե նա, այնքան ավելի խոր և ուժեղ պետք ե փոցխել։ 3—4 տարվա

առջույթը լավ կլինի փոցիսել ափսեավոր փոցիսերով (տես նկ. 6): (Ափսեավոր փոցիսեր կարելի յե ձեռք բերել մոտակա վարձակալաններից):



Նկ. 6. Ափսեավոր փոցիս.

Այսպես փոցիսելուց հետո ստացվում է խիտ և տուղջ տովուրտ, և զոչնչանում են բոլոր մոլիսոտերը:

Յերկրորդ տարվանից սկսած՝ ամառվա ընթացքում առվույտը քաղցում է միքանի անգամ, համենայն դեպս յերկու անգամից վաշպակաս, իսկ ջրովի շրջաններում՝ 3—4 անգամ:

Ամեն սնգամ քաղելուց հետո հողը լիրկաթե փոցիսով փոցիսելու ոգտակար եւ: Զըովիք շրջաններում հողը պետք է ջրել և հետո միայն փոցիսել:

Առվույտն առատ բերք եւ տալիս, Ամառվա
3—4 քաղը կարող եւ տալ մինչև 120 ցենտներ
խոտ, Առվույտը քաղում են ծաղկելուն պես,


Առվույտանոցում (լոնջալըդ) անասուններին
պետք եւ զգուշությամբ արածեցնել, վորովհետեւ
նրանք պնդացնում են հողը, վոր շատ եւ մասում
տովույտին: Այդ զգուշությունն անհրաժեշտ եւ
նաև այն պատճառով, վոր կանաչ առվույտը
յերեքնուկի նման փքացնում եւ անասունների
վորը: Դրա համար ել խոնավ յեղանակին և
թաց առվույտանոցում անասուններ չպետք եւ
բաց թողնել եւ առհասարակ պետք եւ ձեռք առ-
նել այն բոլոր միջոցները, ինչ վոր ասացինք
յերեքնուկի համար:

ԱՌՎՈՒՅՐԻ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ. Առվույտին թշշ-
նամի յեն բոլոր մոլախոտերը: Վորքան շատ են
լինում մոլախոտերը, այնքան շուտ եւ վոչնչա-
նում առվույտը, այդ պատճառով պետք եւ կըռ-
պել մոլախոտերի դեմ: Առաջին տարին կարելի
յենույնիսկ ձեռքով քաղհանել, իսկ հետո ան-
հրաժեշտ եւ ամեն տարի կանոնավոր փոցինել:
Առվույտի մյուս թշնամիներից ամենից ավելի
վսասակար եւ գայլախոտը: Նա տարածվում է
առվույտի վրա այնպես, ինչպես և յերեքնուկի
վրա: Նրա դեմ կռվելու միջոցները նույնն են,
այսինքն՝ պետք եւ նավթով ալրել և կամ պղնձի:

կամ յերկաթի արջասպով սըսկել. գալլուկի լայն տարածվելու դեպքում հողը պետք է հերկել և միքանի տարի այդ հողում առվույտ չցանել: Գոյզ և խոտը շատ համար թշնամի յէ, նրա սերմերը յերկար ժամանակ պահում են իրենց ծլելու ընդունակությունը և անվասա անցնում անառուների ստամոքսով, ուստի ալդպիսի տեղերում ստացված խոտից գոմաղբը լավ ե այրել և չոգտվել ինչպես պարարտանյութով:

ԿՈՐՆԴԱՆ (տե՛ նկար 7): Չնայած կորընդանն ել առվույտի և յերեքնուկի պես նույն բոլոների կարգին ե պատկանում, բայց տեսքով տովույտի և յերեքնուկի նման չե: Կորնգանի տերեներն առվույտի և յերեքնուկի տերեների նման յերեք թերթանի չեն, այլ փետուրի ձև ունենու:

Կորնգանի արմատներն առվույտի և յերեքնուկի արմատներից յերկար են, ուժեղ և յերաշտին շատ ավելի գիտացկուն, այդ պատճառով ել նու շատ ձեռնատու բույս և մեր չոր և անջուր շրջանների համար: Կորնգանը սիրում ե կրակին հողեր, բայց լավ ե աճում և ուրիշ հողերում: Խորը գնացող իր արմատների շնորհիվ նա կաբողանում ե աճել նույնիսկ ամենաաղքատ հողերում: Այս հանգաւանքը հնարավորություն ե տալիս կորնգանը ցանել այնպիսի տեղերում,



Նկ. 7. Կորնզանի բույսը. Տերեվը.

վորտեղ ուրիշ բույսերը լավ չեն աճում: Ալդ-պիսի տեղերում նրա լավ աճելու պատճառներից մեկն ել պիտի համարել այն, վոր ուրիշ բույսեր չեն աճում և չեն խանգարում նրան: Մոլախո-տերից կորնգանն ավելի յե վախենում, քան առվույտը:

Կորնգանի սերմերն ել լոբու նման են, բայց ծածկված են դժվար բաժանելի մաշկով (փառավ), ալդ պատճառով ել ցանում են մաշ-կով: Մի հեղտար հողում գնում ե 1¹/₂—2 ցենտ-ներ սերմ: Այստեղ, վորտեղ կարող են լինել մոլախոտեր, սերմերը պետք ե խիտ ցանել: Հողը պետք ե հերկել խորը, վորովհետեւ վորքան խորը լինի հերկը, այնքան ավելի լավ կզարդանան կորնգանի արմատները:

Ինչպես ասացինք, կորնգանը սիրում ե չոր հողեր և բոլոր, վին անհաջող ե աճում ցուրտ և խոնավ հողերում: Ցանքսի համար հողը պետք ե հերկել աշնանը, յեթե ցանվելու յե գարնանը, և ամառվա ոկղբին, յեթե ցանվելու յե աշնանը: Աս օցինք, վոր կորնգանի սերմը ցանում են մաշկով, բայց վորովհետեւ նա շատ թեթե ե, այդ պատճառով մի որ սերմը ջրում պահում են, վորպեսդի ծանրանա: թրջված, ծանրացած սերմերը լավ են սերմվում և բացի դրանից, հեշտ են ծլում:

Ավելի լավ եր կորնգանը ցանել աշնանը,
բայց վոչ ուշ սեպտեմբերի առաջին կեսից:

Աշնանը ցանքսը շուտ սլիտի անել, վորպես-
զի մինչև ցըտերն սկսվելը կորնգանի արժատ-
ները կարողանան լավ ամրանար Աշնան ցանք-
սը կտտարվում ե առանց պաշտպանող բույսի.
սա լավ ե նաև նրա համար, վոր կորնգանն առ-
հասարակ չի սիրում ուրիշ բույսի հարհանու-
թը ունը:

Բայց չնայած այս հանգամանքին, յեթե
գարնանն ե արվում ցանքսը (վորը պետք ե կտ-
տարել վորքան կարելի յե վաղ), կորնգանը
պետք ե ցանել վորեւե հացահատիկի հետ, վո-
րովինեաւ նա առանց պաշտպանող բույսի շատ
կտուժի արեսի ճառագայթներից:

Յեթե կորնգանը ցանվում ե գարնանը գա-
րու հետ, այն դեպքում առաջ ցանում են զա-
րին, հետո անմիջապես ցանում են կորնգանը և
հողը լավ փոցխում, վորպեսզի ծածկվեն կորըն-
գանի սերմերը:

Շատ քիչ ե պատահում, վոր առաջին տա-
րին կորնգանը յերկու քաղ տա, բայց յերկը որդ
տարին նա տալիս ե նաև յերեք քաղ: Պիտի
նկատել, վոր ինչքան քիչ ե քաղվում կորնգանը,
այնքան յերկար ժամանակ ե բերք տալիս: Յե-
թե կորնգանը բաղվում ե մեկ անգամ, այն ժա-

մանակ պետք եւ քաղել լրիվ ծաղկման շրջանում, իսկ յեթե ուզում են քաղել յերկու և ափելի անգամ, պետք եւ քաղել ծաղիկների վաղկուլգները յերեալուն պես կորնդանի բերքը մեկ հեկտարից հասնում է 45 – 60 ցենտների:

Թեև կանաչ կորնդանը չի մխասում անառուններին, բայց լավ կլինի կորնդանի հողերում անասուններ չարածեցնել, վորովինետե կորնդանը պինդ հողերում չի գիմանում, իսկ արժատավորիկը, վորի վրա գտնվում են նոր ցողուններ ավաղ պառակները, գտնվում եւ հողից բարձր, և մնասունները կարող են նրան կրծել:

Տարեկան մեկ անգամ քաղելու դեպքում կորնդանը միևնուն տեղում կարող է դիմանալ մինչև 15 տարի. շնորհիվ այս հատկության, կորնդանը ցանում են օւրիշ բույսերի համար անպետք ճանաչված հողերում: Կորնդանից հետո այդ հողերը կարող են հացաբույսերի և կրտավառի լավ բերք տալ:

ՀԱՄԿԱՎՈՐ ԽՈՏԵՐ

Յերեքնութեր, առվույտը և կորնդանը պատկանում են այսպես կոչված լոբիանման բույսերի շարքին: Նրանք այդպես են կոչվում, վորովինետե նրանց սերմերը նման են սովորական լոբուն և նրանից տարբերվում են միայն

իրենց մեծությամբ։ Լորիանման բուլսերն իրքի
անասունների կեզ և պարարտանլութ շատ ոգ-
տակար են։

Լավ խոտհարքներում բուսնում են վհչ միայն
յերեքնուկի, առվույտի և կորնգանի վալրի տե-
սակները, այլև շատ ուրիշ տեսակի խոտեր, վո-
րոնք իրենց արտաքին տեսքով նման են հացա-
բույսերին։ Այդ տեսակի բույսերը կոչվում են
հասկավոր խոտեր։

Այդ խոտերը լորիանման խոտերի նման
հողը չեն հարստացնում ազօտով, բայց լավաց-
նում են հողի կազմությունը, տալով նրան
այնպիսի տեսք, ինչպիսի տեսք ունի խամհողը։

Այս խոտերի բարակ արմատները, վորոնք
նման են հացահատիկների արմատներին, ավելի
խորն են դնում հողի մեջ, քան սովորական հա-
ցահատիկը, փաթաթվում են նրա մանր մասերին
և կազմում փոքրիկ հատիկներ։ Հերկելու ժամա-
նակ այսպիսի հողն արմատների կազմած մանր
գնդակների շնորհիվ հատիկակին կազմություն
և ստանում։

Հողի այսպիսի հատիկավոր կազմությունն
ամենալավ աղդեցությունն ե ունենում մշտկ-
վող բուլսերի արմատների զարգացման վրա։
Դրանով ե բացատրվում, վոր խամ հողերում
հացահատիկների բերքն առատ ե լինում։

ՅԵԹԵ հերկած հողը միքանի տարի հանգըստի թողնենք, կտեսնենք, վոր ինչպես լորիանման, այնպես և հասկավոր խոտերն այդ հողամասում շատ են լինում: Առաջին տարիներում աճում են խոշոր, կոշտ և կերի համար անպետք խոտեր, միայն հետագա տարիներում սկսում են յերեալ լավ, քաղցր խոտեր, վրոնք ծառայում են անասունների համար իրքեւ լավ կեր և հարստացնում են հողը:

Վորպեսզի լավ հատկության խոտ շուտ ստացվի, և մյուս կողմից ել հողի կողմը վերականգնելու աշխատանքներն արագանան, արհետական կերպով ցանում են զանազան խոտեր: Ցանելու համար վերցնում են այնպիսի խոտերի սերմեր, վորոնցից առհասարակ շատ են պատահում այդ շրջանի խոտհարքներում:

Այսուեղ մենք կանգ չենք առնի բոլոր տեսակի խոտերի վրա, այլ կմատնանշենք մեկ-յերկուոր միայն, վորոնք ցանելու տեսակետից առանձնապես նշանակություն ունեն:

Սիջ ԽՈՏ: Այս խոտը, ինչպես ասացինք, շատ անգում ցանում են յերեքնուուկի հետ, մանավանդ այն գեպքերում, յերբ ցանկանում են զաշոր 5—6 տարի թօղնել խոտի համար.

Սիդ խոտը ցանում են նաև առանձին: Նրանից ստացվում է քափականին մննդարար

խոտ։ Սա այն առանձին հատկությունն ունի, վոր սառնամանիքներից չի վախենում։ Այդ պատճառով ել նրան ցանում են ցուըտ շըջան։ Ներում։

Միզ խոտը սիրում ե խոնավ հող և առհասարակ լավ ե աճում այն շըջաններում, վորտեղ լավ ե զարգանում նաև յերեքնուկը, և իզուր չէ, վոր նրան ցանում են յերեքնուկի հետ։

Միզ խոտի սերմերը մանր են և մուգ արծաթագույն։ Մեկ հեկտարի վրա ցանում են 15 կիլո։ Յերեքնուկի հետ ցանելու դեպքում վերցնում են 8—12 կիլո։

Միզ խոտը ցանում են նաև պաշտպանող բույսով, վաղ դարնանը, ձյունահալին, ինչպես յերեքնուկը։ Մեկ հեկտարից ստացվում ե մինչեւ 15 ցենտներ։ Փափուկ խոտ ստանալու համար սիզ խոտը պետք ե քաղել այն ժամանակ, յերբ ծաղկի գլուխները կերևան։ Միզ խոտը քաղելուց հետո ազատ կերպով կարելի յե անառւններ արածեցնել։

ԿՈՐԹՈՒԻՄ (աւես նկար 8), ՅԵԺԵ սիզ խոտը լավ աճում և ցուըտ շըջաններում և հաջող բերք տալիս խոնավ հողերում,—ապա կորթումը սիզ խոտից տարբերվում ե նըմանով, վոր յերաշտին ավելի յե դիմանում, մի հանգամանք, վոր մեծ նշանակություն ունի մեր ջրասակավ շըջանների

համար։ Այդ պատճառով նա անփոխարինելի
խոտ և Կորթումը զարգանում և տարածվում ե



Նկ. 8. Կորթում իր հասկով.

իր ստորերկրյա ցողունի միջոցով (տես նկ. 9):
Կորթումի սերմից առաջ ծլում ե սեկ ցողուն,
վորի վրա 5—6 տերի կազմվելուց հետո սկսում
են զարգանալ նրա ստորերկրյա ցողունները,
սրանցից ել սկսում են վեր բարձրանալ նոր
ցողունները։ Ցողունների զարգացումը ահղի յե
ռնենում շարունակ ու անընդհատ, այդ պատճ
առավ ել կորթումը մոլախոտերից չի վախենում,
այլ ընդհակառակն, ինքն և նրանց խեղդում։

Միայն առաջին տարին, յերբ դեռ բույսը թուլլ
ե, նրան կարող էն խանգարել մեծ խոտերը,
ինչպես, որինակ, թրթնջուկը, փշախնձորը կամ



Նկ. 9. Կորումի ստորեկայա ցողունները.

մորմը, մոլեխինդը և այնու Արդ պատճառով ել
այդ մոլախոտերն արմատից պետք ե կտրել


բահով կամ հողութագով (թոխի, թակուչակ, դագմա)։

6—7 տարուց հետո միայն կորթումն սկըռում է թուլանալ, և նրա ստորերկը յողունների արանքներում սկսում են տեղ գտնել ուղիշ խոտեր։

Կորթումի սերմերը յերկար են, թեթև և վորոշ չափով նման վարսակի (խրփուկի) սերմին։ Մեկ հեկտարի վրա ցանում են 60 կիլո։ Առհասարակ ցանում են գարնանը վարսակի կամ դարու հետ։ Բերք ստացվում է յերկրորդ տարվանից։ Աճում ե ամեն տեսակի հողերում։ Հողը ցանելու համար հերկում, մշակում են ճիշտ այնպես, ինչպես հացարույսերի համար։

Նայած անձրեների քանակին, մեկ հեկտարից կարող է ստացվել 15—30 ցենտն։ Խոտաբազում են մինչև սերմերի հասնելը։ Կորթում բռնած հողերում առաջին տարին անառուներ արտծեցնել չե կարելի, յերկրորդ տարվանից կարելի յեւ։





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0044715

(124)

A 8368

ԳԻԱԸ 5 ԿՈՊ. ՄԱՍ. (1 մամուչ)



Օ. Պիրումյան

Травы и способы их культивирования

Госиздат ССР Армении
Эривань--1930